

ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԱԲՐԱՀԱՄ ԳՈՒՐԳԵՆԵԱՆ

Ս. ՂԱԶԱՐԻ ՄԷՋ

Քանի մը տարի է ի վեր Ս. Ղազարի հայկական թանգարանին մէջ ցուցադրուած են քանի մը ուշադրաւ մանրանրկարներ. «Միաբան կուսանք մեկնաստանի», «Կոչնակահար կուսանք մեկնաստանի» եւ «Նահատակութիւն Գրիգորի խոստովանող վկային Քրիստոսի, որ հասարակապէս կոչի Լոյս Գրիգոր»։ Նոր Զուգայի հնագոյն շրջանը բնորոշող կրօնական տարազներու նմոշներ են առաջին երկուքը, «Ս. Կատարինեան» մեկնաստանի կոյսերը ներկայացնող. երրորդը զեղեցիկ ստեղծագործութիւն մըն է, որ պաւորիչ եւ յաջող միանգամայն 1703ին նահատակուած Գրիգորի լուսաշող դէմքը անմահացնող։

Այդ երեք նկարներուն ալ հեղինակն է պարսկահայ մանրանկարիչ Աբրահամ

Գուրգէնեան, որ ինքզինքն ամբողջ նուիրած է վերակենդանացնելու պարսկահայ կենցաղն ու ազգագրական բազմազան արտայայտութիւնները (տարազներ, արհեստներ)։ Եւ տարիներով թափառած է զերեզմանոցներու, եկեղեցիներու եւ վանքերու մէջ, վերակառուցանելու համար խաչքարեր, տապանադիր յիշատակարաններ, փակազրեր. պտտած է հայաբնակ դաւառներ ու գիւղեր, Թեհրանի եւ Սպահանի շրջաններուն մէջ, (Ղարաղան, Վանազ, Սուլթանաբադ, Ազնա, Քեազադ, Մալայեր, Փերիա, Չահարմահալ)։ Ընդօրինակած է Նոր Զուգայի երեւելի անձերու՝ Խոջաներու սենեակներէն սքանչելի որմանկարներ, որոնցմէ զժրխտարար միայն դաժի քանի մը բեկորներ կը մնան։ Եւ այսպիսի գործերու



Աբրահամ Գուրգէնեանի ցուցահանդէսը
Ս. Ղազար, 14 Օգոստոս 1960



Յուցահանդէսի պահուի

նմոշներ ալ Աբրահամ Գուրգէնեան նուիրած էր Ս. Ղազարի թանգարանին, 1959ի ընթացքին, ընդամէնը վեց կտոր։

Բայց Աբրահամ Գուրգէնեան չէ գոհացած այս քանի մը հատակոտոր նուէրներով. ուզած է մնայուն եւ պատկառելի շուրջ մը թողուլ Ս. Ղազարի թանգարանին մէջ, առանձին յարկարաժինով ցուցադրել այնտեղ պարսկահայ գաղութի կեանքը, կրօնական եւ աշխարհիկ տարազներով (երկտասարդի, կիներու, օրհորներու, մանուկներու, զինուորներու, եկեղեցականի) եւ արհեստի արտայայտութիւններով։

Եւ ահա այս ամառ (1960, Յունիսէն Օգոստոս) եկաւ Վենետիկ եւ ամբողջ եւրոպայի, ճգնաւորի նման փակուած, Ազրիականի ջուրներուն նայելով իրականացուց իր երազը բազմամեայ, գծելով անընդհատ, ընդամէնը 65 կտոր նկար, եւ թողուց Միխիթարեան թանգարանին։ Յունիս 26ին, Մուրատ-Ռափայէլեան վարժարանի պարզեւարաշխութեան հանդէսին, նոյն վարժարանի սրահներուն մէջ տուաւ իր առաջին ցուցահանդէսը, զբաւելով բոլորին ուշադրութիւնը։ Իսկ երկրորդ ցուցահանդէսը կազմա-

կերպած էր Ս. Ղազարու մէջ, Օգոստոս 14ին, Գերպոյ. Աբրահամ Աբրահամեան 25ամեայ յորեկանին օրը, ուր բազմաթիւ բարձրաստիճան հիւրեր, ճաչէն վերջ, բարձրացան թանգարան, եւ իսկավերջ, բարձրացան հայկական այդ տարազնապէս հիւսան հայկական մանաւանդ Աբր. րուն զիմաց. հիւսան մանաւանդ Աբր. Գուրգէնեանի մանապիտութեան վրայ, որ կը հասնի մինչեւ նորահարսին ապա-րանջանին կամ մանեակին հատիկներուն թիւին եւ գոյներուն, զգեստի զանազան կտորներուն եւ անոնց ծալքերուն։

Արդէն իսկ նախապէս զանազան ցուցահանդէսներ տուած էր ան, 1946էն ի վեր. Թեհրան (1946, 1948, 1953), Աբահ (1949), Նոր Զուգա (1953), Պէյրութ (1959), Հոմ (1960)։

1958-59ի շրջանին գտնուած է Հայաստան, եւ էջմիածնի թանգարանին թողած է 400 կտոր նկար, որոնք լիովին կը պատկերացնեն պարսկահայ գաղութի կեանքը։

Աբր. Գուրգէնեան սկսած է Օմար Խալիլի քառեկներու մանրանկարներով. յետոյ ներշնչուածի ազդեցութիւնը եղած են յաւերճարար Սաադին, Հաֆսէն, Նիզամին, Ջիրգուսին. այնուհետեւ նուիրուած է Սալեթ Նովային, Նահապետ Քուչակին,

Ա. Իսահակեանին, Յովհ. Թումանեանին: Վերջերս միմիայն նուիրուած է պարսկահայ հին արուեստի եւ մշակութային յիշատակարաններու վերակառուցման: Եւ մենք զերազանցօրէն կը գնահատենք իր այս զաղափարը, քանի որ նպատակ ունի անմահացնել պարսկահայ դարաւոր արժէքները: Ու Մխիթարեան թանգարանի պարսկահայ բաժինը այսուհետեւ ցայտուն դոյներով պիտի քարոզէ այդ արժէքները հայ եւ օտար բազմահազար այցելուներուն:

Աբրահամ Գուրգէնեանի այս նոր հաւաքածոն կարելի է երկու խումբի ենթաբաժնել. ազգագրական եւ պատմական նկարներ. առաջին խումբին կը պատկանին Ախալցխայի, Զանգեզուրի, Ղարաբաղի, Աղուլիսի, Ալեքսանդրապոլի, Գուգարքի, Սեբաստիոյ, Խոտընուրի հայկական տարազներու ներկայացումները. բայց մեծ մասով Պարսկահայ տարազներ են անոնք (Թեհրանի եւ Սպահանի շրջաններու զանազան զիւղերէն). տարազներ զոր վերարտադրելու համար չէ գոհացած միայն իր ակննատեսի պրպտումներով, այլ ուսումնասիրած է նաեւ հրատարակուած նմուշներ, պատմական գրքերու վկայութիւններ եւ նոյնիսկ հնադարեան յախճապակիներ: Իսկ երկրորդ խումբին, այն է պատմական բաժնին կը վերաբերին վերարտադրութիւնները 1) Պարսկահայ տապանաքարերու (Նոր Զուղայի զերեզմանատունէն). 2) Պարսկահայ որմանկարներու. 3) Փակագրութիւններու (աշխարհական եւ եկեղեցական պատմական անձնաւորութեանց. 4) Հնա-

դարեան եկեղեցիներու, ինչպէս Աղթամարի. 5) Հին դրամներու եւ արձանագրութիւններու:

Այս բոլոր վերարտադրութիւնները զերծ են երեւակայական ձեւերէ, (ինչպէս հարազատ էին բոլոր տարազներու նմուշները), ուղղակի իրականին կամ անոր լուսանկարին վրայէն կատարուած են, պարզային համեմատ թեթեւ ու նուրբ գոյներու յաւելումով միայն, որոնք աւելի են իրականի տպաւորութիւն կը թողուն: Եւ որովհետեւ անկարելի է յաճախ նման թանկագին առարկաներ տեսնել, քանի որ ցրուած են աշխարհիս զանազան կողմերը, զանազան թանգարաններու մէջ, Գուրգէնեան զաղափարն ունեցած է եւ յաջողած է վարպետօրէն այդ բոլորը հաւաքել մէկ յարկարաժնի մէջ:

Ու մինչ ի սրտէ երկար տարիներ կը մտախնայ Պրն. Աբր. Գուրգէնեանին, եւ յաջողութիւն իր ազգաշէն զաղափարին, ուրախ ենք որ պարսկահայ կենցաղն ու հին մշակոյթը իրմով ահա յարութիւն կ'առնէ: Յարութիւն կ'առնեն պարսկահայ կեանքի նշանաւոր դէմքերն ու վարպետները, Խաչատուր Կեսարացիները, Խոջա Նազարներն ու Խոջա Աւետիքները, Վարպետ Մինասներն ու Պետրոս Ոսկանները, Քարտաշ Մարգարներն ու Թովհէնց նաւապետները:

Ու բոլորը կու գան, զերեզմանային քունէ մը արթնցած, մեղի հետ շնորհակալ ըլլալու պարսկահայ այս նոր վարպետին եւ անոր փառապահը հիւսելու երախտագէտ զգացումներով:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԵՐԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԵՐԱՅԱՆ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ՊԱՏՐԱՍՏԵՑ

Հ. ՂԵՒՈՆԴ ՎՐԴ. ՏԱՅԵԱՆ

ՀԱՏՈՐ Բ.

Աստուածածնի տօներ - Մուսնի - Յայտնութիւն, հանդերձ ութօրէքով - Աւաղտօներ - Առաքելոց, ՀԲ. աշակերտաց - Յովնանու մարդարէին

Մեծադիր, էջ 436

1960

Գին՝ 27 տոլար

ՀԱՏՈՐ Դ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Մեծադիր, էջ 414

1954

Գին՝ 25 տոլար

ՀԱՏՈՐ Ե.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Մեծադիր, էջ 558

1957

Գին՝ 31 տոլար

ԸՆԴ ՄԱՄԼՈՎ

ՀԱՏՈՐ Գ.

Որ պիտի պարունակէ

Ս. Սարգսի

եւ Մեծ-Պահլի

բոլոր Շարականները,

Բուն Բարեկենդանէն

մինչեւ

Հաղարու Յարութիւն,

բաժնուած

վեց պրակներու

Գին՝ ուղղակի հեղինակին.

P. Léonce Dayan - VENISE (Italie)

